# Հարցաշար 2

1. Ստորև նշվածներից որո՞նք են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով գործարքներ՝
   1) ***անշարժ գույքի վարձակալության պայմանագիր կնքելը.***
   2) ***կտակ կազմելը.***
   3) վարչական տուգանք վճարելը.
   4) ***խանութից համակարգիչ գնելը.***

2. Ո՞ր գործարքներն են համարվում վերացնող պայմանով կնքված՝
   1) գործարքը համարվում է վերացնող պայմանով կնքված, եթե կողմերն իրավունքների և պարտականությունների դադարումը կախման մեջ են դրել մի հանգամանքից, որը պետք է միանշանակորեն իրականանա ապագայում (օրինակ՝ 2012 թ. փետրվարի 15-ին).
   2) գործարքը համարվում է վերացնող պայմանով կնքված, եթե կողմերն իրավունքների և պարտականությունների դադարումը կախման մեջ են դրել գործարքը կնքելուց հետո նախօրոք որոշված ժամկետը անցնելու հետ (օրինակ՝ գործարքը կնքելուց հետո մեկ տարի).
   3) ***գործարքը համարվում է վերացնող պայմանով կնքված, եթե կողմերն իրավունքների և պարտականությունների դադարումը կախման մեջ են դրել մի հանգամանքից, որը հայտնի չէ՝ կիրականանա՞, թե՞ ոչ.***
   4) քաղաքացիական օրենսդրությունը այդպիսի հասկացողություն չունի և գործարքները չեն կարող կնքվել վերացնող պայմանով.

3. Ինչքա՞ն ժամանակ մի անձը կարող է ներկայացնել այլ անձի՝
   1) առևտրային ներկայացուցչության դեպքում, եթե լիազորագրում նշված ժամկետը ավարտվել է, ապա մինչև լիազորագրով նշված ժամկետի ընթացքում սկսված բանակցությունների ավարտը, բայց ոչ ավելի քան լիազորագրում նշված ժամկետի ավարտից վեց ամիս հետո.
   2) լիազորագրում նշված ժամկետում, բայց ոչ ավելի քան երկու տարի.
   3) ***լիազորագրում նշված ժամկետում, բայց ոչ ավելի քան երեք տարի.***
   4) ***եթե լիազորագրում նշված չէ ժամկետ, ապա լիազորագիրը տալուց մեկ տարվա ընթացքում.***

4. Քաղաքացիա-իրավական պարտավորությունների ծագման հիմքերն են՝
   1) ***պայմանագիրը.***
   2) շահույթ կամ (և) եկամուտ ստանալը.
   3) ***վնաս պատճառելը.***
   4) ***անհիմն հարստացումը.***

5. Ե՞րբ է պարտապանն իրավասու կատարել պարտավորությունը, իրենից գանձվելիք գումարը կամ արժեթղթերը նոտարի դեպոզիտ մուծելով՝

1) եթե պարտավորության կատարումն դժվարանում է նրանով, որ պարտապանը չի ցանկանում որևէ շփում ունենալ պարտատիրոջ հետ.

2) ***եթե պարտապանը չի կարողանում կատարել պարտավորությունը, քանի որ պարտատերն անգործունակ է և ներկայացուցիչ չունի.***

3) ***եթե պարտապանը չի կարողանում կատարել պարտավորությունը, քանի որ պարտատերը խուսափել է կատարումն ընդունելուց կամ թույլ է տվել կեղտանց.***

4) ***եթե պարտապանը չի կարողանում կատարել պարտավորությունը, քանի որ ակնհայտորեն պարզ չէ, թե ով է պարտավորությամբ պարտատերը՝ ներառյալ պարտատիրոջ և այլ անձանց միջև այդ առթիվ վեճի առկայության դեպքում.***

6. Ստորև բերված՝ տուժանքի վերաբերյալ պնդումներից, որն է համապատասխանում գործող ՀՀ օրենսդրությանը՝

1) ***տուժանքով ապահովվում է միայն իրական պահանջը.***

2) ***դատարանն իրավունք ունի պակասեցնել տուժանքը, եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին.***

3) տուժանք վճարելու պահանջով պարտատերը կրում է պարտավորության չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ իրեն վնաս հասցնելու հանգամանքի ապացուցման բեռը.

4) ***տուժանքի մասին համաձայնությունը պետք է կնքվի գրավոր՝ անկախ հիմնական պարտավորության ձևից.***

7. Ի՞նչ է գրավը՝

1) գրավ է համարվում այն դրամական գումարը, որ պայմանավորվող կողմերից մեկը պայմանագրով հասանելիք վճարների հաշվին տալիս է մյուս կողմին՝ իբրև պայմանագրի կնքման ապացույց և դրա կատարման ապահովում.

2) ***գրավը (գրավի իրավունքը) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար.***

3) գրավատուն, գրավի (գրավի իրավունքի) համաձայն, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար.

4) գրավատուն այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, գրավի պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս.

8. Ե՞րբ է համարվում փոխառության պայմանագիրը կնքված՝

1) փոխառության պայմանագիրը համարվում է կնքված բանկի կամ այլ վարկային կազմակերպության կողմից փոխառուին փոխառության գումարը հանձնելու համաձայնության մասին կնքված փաստաթուղթ հանձնելու պահից.

2) փոխառության պայմանագիրը համարվում է կնքված համապատասխան պայմանագրի տեքստը փոխառուի և փոխատուի կողմից ստորագրելու պահից.

3) փոխառության պայմանագիրը համարվում է կնքված, երբ փոխատուն բանավոր հաստատում է իր համաձայնությունը փոխառության գումարը հանձնել փոխառուին.

4) ***փոխառության պայմանագիրը համարվում է կնքված փոխառության գումարը փոխառուին հանձնելու պահից.***

9. Ստորև նշված պայմանագրերից որո՞նք են կոնսենսուալ պայմանագրեր՝

1) ***վարկի պայմանագիր.***

2) տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիր.

3) փոխառության պայմանագիր.

4) ***հանձնարարության պայմանագիր.***

10. Ստորև նշված պայմանագրերից, որո՞նք են ենթակա պարտադիր նոտարական վավերացման, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով ՝

1) երեսուն միլիոն և ավել գումարի փոխառության պայմանագիր.

2) ***անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագիրը***

3) ավտոտրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր.

4) հաստոցների գրավի պայմանագիր.

11. Որո՞նք են բնակելի տան առուվաճառքի պայմանագրի էական պայմանները՝

1) բնակելի տան սենյակների քանակը.

2) ***բնակելի տան որոշակիորեն սահմանող տվյալները (հասցեն, սեփականության վկայականի համարը և այլն).***

3) ***բնակելի տան գինը.***

4) ***այն անձանց անվանացանկը, որոնց բնակելի տարածության օգտագործման իրավունքը, մինչև առուվաճառքի պայմանագիրը կնքելը, գրանցված է օրենքով սահմանված կարգով.***

12. Ե՞րբ է դադարում լիազորագրի գործողությունը՝

1) ***լիազորագրի ժամկետը լրացել է.***

2) ***լիազորագրողը վերացրել է այն.***

3) տեղի է ունեցել այն իրավաբանական անձի տնօրենի փոփոխություն, որի անունից տրվել է լիազորագիրը.

4) ***մահացել է կամ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ով տվել է լիազորագիրը.***

13. Ի՞նչ է պետական սեփականությունը՝

1) ***ցանկացած գույք, որը սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ-ին, պետական սեփականություն է.***

2) ***հողը, որը չի պատկանում քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին, պետական սեփականություն է.***

3) բազմաբնակարան շենքի տանիքը, որի բնակարանները սեփականության իրավունքով պատկանում են քաղաքացիներին, պետական սեփականություն է.

4) Հայաստանի Հանրապետության համայնքների համայնքային և Հայաստանի Հանրապետությանը պետական բյուջեների միջոցները.

14. Ու՞մ սեփականությունն է գույքի օգտագործման արդյունքում ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները), եթե այդ մասով բացակայում է որևէ կարգավորում օրենքում, այլ իրավական ակտերում կամ այդ գույքի օգտագործման մասին պայմանագրում՝

1) գույքի օգտագործման արդյունքում ստացվածը պատկանում է այդ գույքի սեփականատիրոջը կամ նրա կողմից մատնանշված անձին (բենեֆիցիար).

2) ***գույքի օգտագործման արդյունքում ստացվածը պատկանում է այդ գույքը օրինական հիմունքներով օգտագործող անձին.***

3) պայմանագրում համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում գույքի օգտագործման արդյունքում ստացվածը պատկանում է գույքի գտնվելու վայրի համայնքին, իսկ եթե գույքը շարժական է, ապա պետությանը.

4) գույքի օգտագործման արդյունքում ստացվածը համարվում է սեփականատիրոջ և այդ գույքը օրինական հիմունքներով օգտագործող անձի համատեղ սեփականություն՝ հավասար չափաբաժիններով.

15. Եթե հեռուստացույցի նվիրատվության պայմանագրով չի նախատեսված նվիրառուի սեփականության իրավունքի ծագման պահը, ե՞րբ է այդ իրավունքը ծագում՝

1) նվիրառուի սեփականության իրավունքը ծագում է պայմանագիրը կնքելու պահից.

2) եթե կողմերի պահանջով պայմանագիրը անցնում է նոտարական վավերացում, ապա հեռուստացույցի նկատմամբ սեփականության իրավունքը անցնում է պայմանագրի նոտարական վավերացման պահից.

3) ***նվիրառուի սեփականության իրավունքը ծագում է հեռուստացույցը հանձնելու պահից.***

4) հեռուստացույցի նկատմամբ սեփականության իրավունքը անցնում է նվիրատվության մասին հրապարակային հայտարարելու պահից.

16. Ու՞մ սեփականության իրավունքն է ճանաչվում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ՝

1) նշված կառույցի նկատմամբ ճանաչվում է այն կառուցողի իրավունքը.

2) ***նշված կառույցի նկատմամբ ճանաչվում է համայնքի սեփականությունը***

3) նշված կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության սեփականությունը.

4) տվյալ կառույցը համարվում է տիրազուրկ գույք, և նրա նկատմամբ սեփականության իրավունքը որոշվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178 հոդվածով նախատեսված կանոններով.

17. Ինչպե՞ս կարող է կնքվել անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը՝

1) անշարժ գույքը չի կարող լինել առուվաճառքի առարկա. այս դեպքում փոխանցվում է միայն օգտագործման իրավունքը.

2) անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կարող է կնքվել նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի (օֆերտա և ակցեպտ փոխանակման միջոցով.

3) անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կարող է կնքվել անշարժ գույքը փաստացի հանձնելու և դրա դիմաց գումարը փաստացի ստանալու միջոցով՝ բանավոր համաձայնության հիման վրա, առանց որևէ ձևական պահանջներ իրականացնելու.

4) ***անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կարող է կնքվել գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որը ենթակա է նոտարական վավերացման.***

18. Ստորև թվարկված պայմանագրերից ո՞րն է համարվում նվիրատվության պայմանագիր՝

1) պայմանագիր, համաձայն որի, ՀՀ քաղաքացի Ա-ն հանձնում է ՀՀ քաղաքացի Բ-ին սեփականության իրավունքով իրեն պատկանող հեռուստացույցը, ինչի դիմաց Բ-ն համաձայնվում է ներել Ա-ի՝ իր հանդեպ ունեցած դրամական պարտավորությունը (50000 ՀՀ դրամ).

2) ՀՀ քաղաքացի Ա-ի հայտարարությունը, որ ինքը պարտավորվում է իրեն պատկանող ողջ գույքը հանձնել ՀՀ քաղաքացի Բ-ին՝ պայմանով, որ հայտարարությունը կատարվում է գրավոր և վավերացվում է նոտարական կարգով.

3) ՀՀ քաղաքացի Ա-ն գրավոր կերպով տրված հայտարարությունը, համաձայն որի Ա-ն պարտավորվում է իր մահվան դեպքում, սեփականության իրավունքով իրեն պատկանող Մերսեդես մակնիշի ավտոմեքենան անհատույց հանձնել Բ-ին.

4) ***պայմանագիր, համաձայն որի ՀՀ քաղաքացի Ա-ն պարտավորվում է պայմանագիրը կնքելուց հետո մեկ ամսվա ընթացքում անհատույց ՀՀ քաղաքացի Բ-ին սեփականությանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Մերսեդես մակնիշի ավտոմեքենան***.

19. Եթե հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետ պայմանագրում որոշված չէ, ի՞նչ ժամկետով է համարվում վարձակալության պայմանագիրը կնքված՝

1) պայմանագիրը համարվում է չկնքված, քանի որ վարձակալության ժամկետը վարձակալության պայմանագրի էական պայմաններից մեկն է.

2) համարվում է կնքված երեք տարով շարժական գույքի վարձակալության, և քառասունինը տարով անշարժ գույքի դեպքում.

3) համարվում է կնքված տաս տարով.

4) ***պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով.***

20. Ու՞մ սեփականությունն են համարվում վարձակալած գույքի անբաժանելի բարելավումները, վարձակալության պայմանագրում դրանց մասին դրույթների բացակայության դեպքում՝

1) անբաժան բարելավումները համարվում են այն համայնքի սեփականությունը, որտեղ որ տվյալ գույքը գտնվում է, իսկ անշարժ գույքի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը.

2) ***անբաժան բարելավումները վարձատուի սեփականությունն են, և եթե դրանք իրականացվել են առանց վարձատուի համաձայնության, ապա այդ բարելավումների արժեքը չի հատուցվում.***

3) անբաժան բարելավումները համարվում են վարձատուի և վարձակալի համատեղ սեփականությունը.

4) ***անբաժան բարելավումները վարձատուի սեփականությունն են, սակայն եթե անբաժան բարելավումները իրականացվել են վարձատուի համաձայնությամբ, ապա վարձակալն իրավունք ունի դրանց համար փոխհատուցում ստանալ.***

21. Ի՞նչ ձևով պետք է կնքվի շինության վարձակալության պայմանագիրը՝

1) ***շինության վարձակալության պայմանագիրը պարտադիր պետք է կնքվի գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, ինչը ենթակա է նոտարական վավերացման.***

2) շինության վարձակալության պայմանագիրը կարող է կնքվել նոտարական վավերացրած օֆերտայի և ակցեպտի փոխանակման միջոցով.

3) շինության վարձակալության պայմանագիրը կարող է կնքվել բանավոր, սակայն այս դեպքում կողմերի հարաբերությունները կկարգավորվեն բացառապես քաղաքացիական օրենսգրքի դրույթներով.

4) շինության դեպքում կնքվում է ոչ թե վարձակալության, այլ վարձույթի պայմանագիր, ինչը ենթակա է նոտարական վավերացման.

22. Ու՞մ իրավունք չունի անհատույց օգտագործման հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը առևտրային կազմակերպությունը՝

1) առևտրային կազմակերպությունն իրավունք ունի գույքն անհատույց օգտագործման հանձնել միայն Հայաստանի Հանրապետությանը և ՀՀ համայնքներին.

2) առևտրային կազմակերպությունն իրավունք չունի գույքն անհատույց օգտագործման հանձնել որևէ այլ անձի.

3) ***առևտրային կազմակերպությունն իրավունք չունի գույքն անհատույց հանձնել իր հիմնադրին կամ մասնակցին.***

4) ***առևտրային կազմակերպությունն իրավունք չունի գույքն անհատույց օգտագործման հանձնել իր կառավարման կամ վերահսկողության մարմինների անդամներին.***

23. Ի՞նչ ձևով պետք է կնքվի համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (ֆրանչայզինգ) պայմանագիրը՝

1) ***ֆրանչայզինգի պայմանագիրը պետք է կնքվի գրավոր ձևով.***

2) Ֆրանչայզինգի պայմանագիրը միշտ ենթակա է նոտարական վավերացման.

3) ***ֆրանչայզինգի պայմանագիրը կարող է կնքվել գրավոր օֆերտայի և ակցեպտի փոխանակման միջոցով.***

4) Ֆրանչայզինգի պայմանագիրը կարող է կնքվել բանավոր.

24. Նշվածներից որո՞նք են ակցեսոր պարտավորություններ՝

1) ***գրավը***.

2) առուվաճառքի պայմանագրի համաձայն ապրանքի գումարը վճարելու պարտավորությունը.

3) ***տուժանք վճարելու պարտավորությունը.***

4) վարձակալած գույքի համար վճարելու պարտավորությունը.

25. Ի՞նչը չի կարող լինել գրավի առարկա՝

1) ***գրավի առարկա չի կարող լինել ալիմենտի պահանջը.***

2) գրավի առարկա չի կարող լինել որևէ գույքային իրավունք (պահանջ).

3) ***գրավի առարկա չի կարող լինել շրջանառությունից հանված գույքը.***

4) գրավի առարկա կարող է լինել ցանկացած գույք և ցանկացած գույքային պահանջ.

26. Նշվածներից ո՞ր տեղեկություններն են պարտադիր գրավի պայմանագրում նշման համար՝

1) գրավի իրացման կարգը (դատարան դիմելու միջոցով, կամ արտադատարանական).

2) ***կողմերի անունները (անվանումները) և բնակության (գտնվելու) վայրերը.***

3) ***գրավով ապահովված պարտավորության էությունը, չափը և կատարման ժամկետները.***

4) ***գրավի առարկան.***

27. Ինչպի՞սի իրավունքներ ունի գրավադրված գույքի նկատմամբ դրա սեփականատերը, եթե գրավի պայմանագրով կամ օրենքներով այլ բան նախատեսված չէ՝

1) ***գրավատուն իրավունք ունի գրավի առարկան օտարել.***

2) ***գրավատուն իրավունք ունի գրավի առարկան կտակել.***

3) գրավատուն իրավասու չէ օտարել կամ որևէ այլ կերպ տնօրինել գույքը, բայց իրավունք ունի օգտագործել այն.

4) ***գրավատուն իրավունք ունի գրավի առարկան տրամադրել վարձակալության կամ անհատույց օգտագործման.***

28. Ինչպե՞ս կարող են իրականացվել դրամական միջոցների գրավը՝

1) գրավի առարկա դրամական միջոցները կարող են պահվել դատարանի դեպոզիտային հաշվում.

2) գրավի առարկա դրամական միջոցները կարող են պահվել ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայության դեպոզիտային հաշվում.

3) ***գրավի առարկա դրամական միջոցները կարող են պահվել բանկի դեպոզիտային հաշվում.***

4) ***գրավի առարկա դրամական միջոցները կարող են պահվել նոտարի դեպոզիտային հաշվում.***

29. Նշվածներից որո՞նք են հիպոթեքի պայմանագրի էական պայմաններ՝

1) ***հիփոթեքի առարկան, որը որոշվում է պայմանագրում դրա անվանման, գտնվել վայրի նշումով և այդ առարկայի նույնացման համար բավարար նկարագրությամբ.***

2) եթե պայմանագրի կողմը ֆիզիկական անձ է, ապա վերջինիս տարիքը.

3) ***հիփոթեքով ապահովված պարտավորության էությունը, չափը և կատարման ժամկետը.***

4) եթե հիփոթեքի առարկան առանձնատուն է, ապա պարտադիր պետք է նշվի անշարժ գույքի կադաստրային գինը.

30. Ի՞նչ է մտնում ժառանգության զանգվածի մեջ՝

1) ***ժառանգության զանգվածի մեջ մտնում է ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները.***

2) ժառանգության զանգվածի մեջ մտնում է ալիմենտային պարտավորություններով իրավունքները և պարտականությունները.

3) ժառանգության զանգվածի մեջ մտնում է քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառած վնաս հատուցելու իրավունքը.

4) Ժառանգության զանգվածի մեջ մտնում է անձնական ոչ գույքային իրավունքները.

31. Ո՞վ կարող է լինել ըստ կտակի ժառանգ՝

1) ***ժառանգության բացման օրը կենդանի քաղաքացիներ.***

2) ժառանգատուի կենդանության ժամանակ նախագծված և ժառանգությունը բացելուց հետո հիմնադրված իրավաբանական անձինք.

3) ***ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացելուց հետո կենդանի ծնված քաղաքացիներ.***
4) ***միջազգային կազմակերպությունները.***

32. Ի՞նչ եղանակով կարող է քաղաքացին կտակ անել՝
1) կտակը կարող է արվել լիազորված անձի միջոցով՝ պայմանով որ լիազորագիրը պարունակում է էական պայմանները.
2) ***կտակը պետք է արվի անձամբ.***
3) կտակը կարող է արվել լիազորված անձի միջոցով՝ պայմանով որ լիազորագիրը անցել է նոտարական վավերացում.
4) կտակը կարող է արվել լիազորված անձի միջոցով՝ պայմանով որ լիազորագիրը պարունակում է կտակի էական պայմանները և անցել է նոտարական վավերացում.

33. Ո՞վ ունի ժառանգության պարտադիր բաժնի իրավունք՝

1) ***ժառանգության պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի անչափահաս երեխաները.***
2) ժառանգության պարտադիր բաժնի իրավունք ունեն բոլոր առաջին հերթի ժառանգները.
3) ***ժառանգության պարտադիր բաժնի իրավունք ունի ժառանգատուի ամուսինը, ով օրենքով սահմանված կարգով ճանաչված է հաշմանդամ.***
4) ժառանգության պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի՝ մինչև 60 տարեկան տարիք ունեցող ծնողները.

34. Ի՞նչ պայման է իրավասու դնել կտակարարը պայմանով կտակում՝
1) պայմանով կտակով, կտակարարը իրավասու է ժառանգների վրա պարտականություն դնել, որպեսզի վերջիններս իրենց հերթին՝ մահվան դեպքում ժառանգություն ստացված գույքը ժառանգեն կոնկրետ անձի.
2) պայմանով կտակով, կտակարարն իրավասու է ժառանգների վրա պարտականություն դնել, որպեսզի վերջիններս ժառանգված գույքը օգտագործեն որևէ կոնկրետ կերպ (օրինակ՝ անձը բնակարանը ժառանգում է որևէ համալսարանի, պայմանով, որ այդ բնակարանը պետք է վերածվի հանրակացարանի, և չի կարող այլ կերպ օգտագործվել).
3) պայմանով կտակով, կտակարան իրավասու է ժառանգների վրա, որպես ժառանգությունը ստանալու նախապայման, դնել ցանկացած պարտականություն, ինչպես օրինակ իր թշնամիներից վրեժ լուծել՝ ընդհուպ մինչև սպանություն.
4) ***կտակարարն իրավունք ունի ժառանգություն ստանալը պայմանավորել ժառանգի վարքագծի բնույթի վերաբերյալ որոշակի օրինաչափ պայմանով.***

35. Ո՞ր դեպքում կտակարարն իրավունք ունի ժառանգությունից զրկել ըստ օրենքի ժառանգներին՝

1) կտակարարն իրավունք ունի ցանկացած անձի զրկել ըստ օրենքի ժառանգությունից, պայմանով որ կտակում պետք է ներառի դրա համար հիմնավոր պատճառ.

2) ***կտակարարն իրավունք ունի առանց պատճառների բացատրության ժառանգությունից զրկել ըստ օրենքի ժառանգին, բացառությամբ, եթե այդ ժառանգը, ժառանգության բացման օրը, պարտադիր բաժնի իրավունք ունի.***

3) կտակարարն իրավունք ունի առանց պատճառների բացատրության պարտադիր բաժնի իրավունք չունեցող ցանկացած անձի զրկել ըստ օրենքի ժառանգությունից, իսկ պարտադիր բաժնի իրավունք ունեցող ըստ օրենքի ժառանգներին՝ հիմնավորված պատճառաբանությամբ.

4) կտակարարն իրավունք չունի զրկել որևէ ժառանգի ըստ օրենքի ժառանգման իրավունքից.

36. Ի՞նչ է փակ կտակը՝

1) փփակ կտակը, դա այն կտակն է, որի գոյության մասին նոտարն իրավունք չունի տեղեկացնել որևէ այլ անձի՝ ի հակադրություն բաց կտակի, որի գոյության մասին տեղեկությունները բաց են.

2) փակ կտակը, դա այն կտակն է, որը պարունակում է միայն կտակը կազմելու ժամանակ ժառանգատուին սեփականության իրավունքով պատկանող գույքի մասին կարգադրություն.

3) ***փակ կտակը, դա այն կտակն է, որը կտակարարի ցանկությամբ նոտարը վավերացնում է առանց դրա բովանդակության հետ ծանոթանալու.***

4) փակ կտակը, դա այն կտակն է, որը պարունակում է միայն ժառանգատուին պատկանող անշարժ գույքին վերաբերվող հանձնարարություն(ներ).

37. Ի՞նչ է ենթադրում կտակի գաղտնիության սկզբունքը՝

1) կտակի գաղտնիության սկզբունքի համաձայն կտակի բովանդակությունը, ինչպես նաև կտակը կազմելու, այն վավերացնելու, փոփոխելու կամ լրացնելու մասին տեղեկությունները կազմում են պետական կամ ծառայողական գաղտնիք.

2) ***կտակի գաղտնիությունը դա նոտարի, կտակը վավերացնող այլ անձի, վկաների, ինչպես նաև կտակարարի փոխարեն կտակն ստորագրած քաղաքացու պարտականությունն է մինչև ժառանգության բացելը չհրապարակել տեղեկություններ կտակը կազմելու, այն վավերացնելու, փոփոխելու կամ լրացնելու մասին.***

3) ***կտակի գաղտնիությունը դա նոտարի, կտակը վավերացնող այլ անձի, վկաների, ինչպես նաև կտակարարի փոխարեն կտակն ստորագրած քաղաքացու պարտականությունն է մինչև ժառանգության բացելը չհրապարակել տեղեկություններ կտակի բովանդակության մասին.***

4) կտակի գաղտնիությունը դա բացառապես նոտարի պարտավորությունն է ձեռնարկել իրենից կախված բոլոր գործողությունները, որպեսզի մինչև ժառանգների՝ ժառանգության ընդունելը կտակի բովանդակությունը գաղտնի մնա բոլոր մնացած անձանցից.

38. Ի՞նչ հիմքերով կարող է կտակը անվավեր ճանաչվել՝

1) ***կտակն անվավեր է ճանաչվում կտակի ձևի մասին կանոնները խախտելու հետևանքով.***

2) կտակն անվավեր է ճանաչվում, երբ կտակարարի ստորագրությունը դրված է կտակի տեքստի ներքևի ձախ անկյունում՝ աջ անկյունում դնելու փոխարեն.

3) ***կտակն անվավեր է ճանաչվում կտակը կազմելու վայրը և ժամանակը կտակում նշված չլինելու դեպքում.***

4) կտակն անվավեր է ճանաչվում, երբ կտակարարը իրեն սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Թումանյանի փող. 15 բն. 6 հասցեում գտնվող գույքը կտակելիս, կտակի տեքստում վրիպել է և նշել է ք. Երևան, Թամանյանի փող. 15, բնկ. 6 հասցեն, ընդ որում որևէ նշանակություն չունի այն փաստը, որ ապացուցված է, որ կտակարարը երբեք Թամանյան փողոցի վրա բնակարան չի ունեցել և չի նախատեսել ձեռք բերել.

39. Ո՞ր դեպքում և ի՞նչ չափով կտակակատարն իրավունք ունի ստանալ վարձատրություն կամ ծախսերի հատուցում՝

1) կտակակատարը՝ ժառանգությունը պահպանելու, այն կառավարելու և կտակը կատարելու հետևանքով կրած անհրաժեշտ ծախսերի համար ժառանգության հաշվին հատուցում ստանալու իրավունք ունի, սակայն իրավունք չունի վարձատրություն ստանալ.

2) ***կտակակատարը՝ ժառանգությունը պահպանելու, այն կառավարելու և կտակը կատարելու հետևանքով կրած անհրաժեշտ ծախսերի համար ժառանգության հաշվին հատուցում, ինչպես նաև՝ վարձատրություն ստանալու իրավունք ունի.***

3) կտակակատարը՝ ժառանգությունը պահպանելու, այն կառավարելու և կտակը կատարելու հետևանքով կրած անհրաժեշտ ծախսերի համար ժառանգության հաշվին հատուցում ստանալու իրավունք ունի, եթե միայն ծախսերի նախահաշիվը հաստատվել է նոտարի կամ դատարանի կողմից, ինչպես նաև վարձատրություն ստանալու իրավունք ունի, եթե ժառանգության հաշվին վարձատրություն ստանալու հնարավորությունը և վարձատրության չափը հաստատված է կտակով.

4) կտակակատարը՝ ժառանգությունը պահպանելու, այն կառավարելու և կտակը կատարու հետևանքով կրած անհրաժեշտ ծախսերի համար ժառանգության հաշվին հատուցում, ինչպես նաև՝ վարձատրություն ստանալու իրավունք ունի, եթե միայն ծախսերի նախահաշիվը և վարձատրության չափը նոտարական վավերացում ստացած հայտարարության կամ պայմանագրի ձևով ստանում է բոլոր ժառանգների համաձայնությունը.

40. Երկրորդ հերթի ժառանգներ են՝

1) ժառանգատուի ծնողները.

2) ***ժառանգատուի քույրը.***

3) ***ժառանգատուի եղբոր երեխաները ներկայացման իրավունքով.***

4) ժառանգատուի մայրական կողմի պապը.

41. Ովքե՞ր են դասվում ըստ օրենքի ժառանգների թվին:

1) ժառանգատուի խնամքի տակ գտնվող բոլոր վաթսուն տարեկան դարձած անձինք.

2) ժառանգատուի ոչ արյունակից ազգականները.

3) ժառանգատուի հետ ավելի քան տասը տարի համատեղ բնակվող անձինք.

4) ***ժառանգատուի խնամքի տակ առնվազն մեկ տարի գտնվող անաշխատունակ անձը.***

42. Նշվածներից որոնք են դասվում երկրորդ հերթի ժառանգների թվին՝

1) ժառանգատուի ծնողները.

2) ***ժառանգատուի համամայր քույրը.***

3) ***ժառանգատուի եղբայրը.***

4) ***ժառանգատուի համահայր եղբոր երեխան ներկայացման իրավունքով.***

43. Ժառանգատուի ժառանգության զանգվածի մեջ չի մտնում՝

1) ***ժառանգատուի ամուսնու գույքը, որը նա ձեռք է բերել մինչև ամուսնությունը.***

2) ***ժառանգատուի ամուսնու գույքը, որը նա ստացել է որպես նվեր ամուսնության ընթացքում.***

3) ժառանգատուի բաժինը ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքում.

4) ***ժառանգատուի ամուսնու բաժինը ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքում.***

44. Ո՞ր դեպքերում է ժառանգվող գույքը ճանաչվում անժառանգ՝

1) եթե ըստ օրենքի բոլոր ժառանգները հրաժարվել են ժառանգությունից, իսկ ըստ կտակի միակ ժառանգը անչափահաս է.

2) եթե միակ ժառանգը ՀՀ քաղաքացի չէ.

3) ***եթե բոլոր ժառանգները մեկուսացվել են ժառանգությունից.***

4) ***եթե չկան ոչ ըստ կտակի և ոչ էլ ըստ օրենքի ժառանգներ.***

45. Ի՞նչ եղանակով է կատարվում ժառանգության ընդունումը ժառանգի կողմից

1) ***ժառանգի համապատասխան դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին անձամբ հանձնելով.***

2) ***եթե այլ բան ապացուցված չէ, ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի կառավարելով.***

3) ***եթե այլ բան ապացուցված չէ, ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի տիրապետելով.***

4) թերթում այդ մասին հայտարարություն տալով.

46. Ո՞ր դեպքերում առաջին ժառանգը չի կարող հրաժարվել ժառանգությունից

1) ժառանգության բացման օրվանից մեկ ամիս հետո.

2) ***ժառանգության բացման օրվանից վեց ամիս հետո.***

3) ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում, եթե արդեն ընդունել է ժառանգությունը.

4) ***ժառանգության բացման օրվանից ութ ամիս հետո.***

47. Նշվածներից ո՞րը չի մտնում ժառանգության զանգվածի մեջ՝

1) սահմանափակ շրջանառություն ունեցող գույքը.

2) ***պետական պարգևները.***

3) ***պետական շքանշանները.***

4) հուշանշանների հավաքածուները.

48. Եթե ժառանգության իրավունքի վկայագիր տալուց հետո ի հայտ է եկել այնպիսի գույք, որի համար վկայագիր չի տրվել, ապա՝

1) այդ գույքը անցնում է ժառանգության բացման վայրի համայնքի սեփականությանը.

2) այդ գույքը անցնում է Հայաստանի Հանրապետության սեփականությանը.

3) ***տրվում է ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր.***

4) նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը վերացվում է և տրվում է նոր վկայագիր.

49. Ստորև թվարկվածներից ո՞րն է նկարագրում նոտարի կարգավիճակը ՀՀ-ում՝

1) ***նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է Նոտարիատի մասին ՀՀ օրենքով նախատեսված գործողություններ և ծառայություններ.***

2) նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող պետական պաշտոնյա է, որը Հայաստանի Հանրապետության անունից, ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է Նոտարիատի մասին ՀՀ օրենքով նախատեսված գործողություններ և ծառայություններ:

3) նոտարը ՀՀ գործադիր իշխանության մասը կազմող պաշտոնատար անձ է, ում կարգավիճակի առանձնահատկությունները որոշվում են Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով, ՀՀ միջազգային պայմանագրերով և ՀՀ նոտարական պալատի կանոնադրությամբ.

4) նոտարը արդարադատություն իրականացնող մասնավոր անձ է.

50. Ո՞րն է նոտար նշանակվելու համար անհրաժեշտ նվազագույն կրթական ցենզը՝

1) ֆորմալ կրթության պահանջ առկա չէ, անհրաժեշտ է միայն համապատասխան աշխատանքային փորձը և քննությունների դրական արդյունքները.

2) ***իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում.***

3) իրավաբանության մագիստրոսի որակավորում.

4) իրավաբանական գիտությունների թեկնածի գիտական աստիճան.

51. Ի՞նչ իրավական ռեժիմ է կիրառվում նոտարական գործողությունների նկատմամբ՝

1) ***կիրառվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության ռեժիմը.***

2) կիրառվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ոչ առևտրային գործունեության ռեժիմը, քանի որ նոտարը, նոտարական գործունեություն իրականացնելիս առաջնահերթ շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում.

3) կիրառվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմնադրամներին յուրահատուկ ռեժիմ.

4) կիրառվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պետական կառավարչական հիմնարկներին վերաբերվող իրավական ռեժիմը, քանի որ նոտարը նոտարական գործողություններ իրականացնում է ՀՀ անունից.

52. Ի՞նչ իրավական հետևանքներ ունի նոտարի գործունեության կասեցումը

1) ***գործունեությունը կասեցված նոտարը, մինչև կասեցման ժամկետի ավարտն իրավունք ունի իրականացնել նոտարական ցանկացած գործունեություն, բացառությամբ նոտարական գործողությունների կատարումը.***

2) գործունեությունը կասեցված նոտարը իրավունք ունի շարունակել իրականացնել նոտարական գործողություններ և իրականացնել նոտարական այլ գործունեություն:

3) ***նոտարի կնիքը պահվում է Հայաստանի Հանրապետության նոտարական պալատում.***

4) նոտարը պարտավոր է դադարեցնել որևէ նոտարական գործունեություն կատարելը՝ ներառյալ նոտարական գործողություններ և այլ նոտարական գործունեություն իրականացնելը.

53. Ի՞նչ կարգով կարող է նոտարի գործողությունների նկատմամբ հսկողություն իրականացնել արդարադատության նախարարությունից բացի այլ մարմին՝

1) նոտարի գործողությունների նկատմամբ հսկողություն իրականացնող այլ մարմինը կարող է նոտարի մոտ ստուգումներ իրականացնել միայն դատարանի համապատասխան որոշման կամ վճռի հիման վրա.

2) ***նոտարի գործողությունների նկատմամբ հսկողություն իրականացնող այլ մարմինը նոտարի մոտ ստուգումներ կատարելուց առաջ այդ մասին պետք է հայտնի արդարադատության նախարարին և նոտարական պալատ.***

3) նոտարի գործողությունների նկատմամբ հսկողություն իրականացնող այլ մարմինը կարող է նոտարի մոտ ստուգումներ իրականացնել միայն գլխավոր դատախազի կամ վարչապետի համաձայնությամբ.

4) ***նոտարի գործողությունների նկատմամբ հսկողություն իրականացնող այլ մարմինը պետք է արդարադատության նախարարին և նոտարական պալատ ուղարկեն ստուգման արդյունքների վերաբերյալ ակտերի (արձանագրությունների) պատճենները.***

54. Ստորև նշվածներից ի՞նչ է պարտավոր անել նոտարը՝

1) ***նոտարը պարտավոր է չբացահայտել նոտարական գաղտնիքը, բացառությամբ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի.***

2) նոտարը պարտավոր է նոտարական գործողություններ իրականացնելիս պաշտպանել իրեն ընտրած կողմի իրավունքները, պահպանել քաղաքավարիության ընդհանուր կանոնները.

3) նոտարը պարտավոր է չմերժել քաղաքացիների դիմումները և վավերացնել պայմանագրերը, եթե նույնիսկ նոտարական գործողությունները հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին՝ պայմանով որ նա քաղաքացիներին պետք է պարզաբանի այդպիսի գործողությունների արդյունքում հնարավոր բացասական հետևանքները.

4) ***նոտարը պարտավոր է նոտարական գրասենյակի հասցեն փոխելիս այդ մասին հինգ օր առաջ հայտնել արդարադատության նախարարություն և նոտարական պալատ.***

55. Ո՞վ է ընդունում նոտարական պալատի կանոնադրությունը՝

1) նոտարական պալատի կանոնադրությունը հաստատում է արդարադատության նախարարը.

2) նոտարական պալատի կանոնադրությունը ընդունում է ՀՀ կառավարությունը.

3) ***նոտարական պալատի կանոնադրությունը ընդունում է նոտարական պալատը.***

4) նոտարական պալատի կանոնադրությունը ընդունում է Լատինական նոտարիատի միջազգային միությունը.

56.Ի՞նչ է նախաձեռնում նոտարական պալատը իր խնդիրները իրականացնելու համար՝

1) ***նոտարական պալատը արդարադատության նախարարություն է ներկայացնում նոտարների գործունեությանն առնչվող օրենքների առաջարկներ.***
2) նոտարական պալատը դիտորդական առաքելություն է ուղարկում ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման ընտրություններին.
3) ***նոտարական պալատը նոտարական պրակտիկայի միասնականության ապահովման նպատակով ամփոփում է նոտարների գործունեության արդյունքները.***
4) ***նոտարական պալատը կազմակերպում է նոտարների ուսուցման և որակավորման բարձրացման գործը.***

57. Ստորև նշվածներից ո՞վ կարող է նշանակվել նոտարի օգնականի պաշտոնում՝
1) 25 տարեկան արևելագիտության բնագավառում բակալավրի աստիճան ստացած չամուսնացած երիտասարդը, ով չունի դատվածություն.
2) ***30 տարեկան, իրավաբանության բակալավրի և իրավաբանության մագիստրոսի գիտական աստիճան ստացած կինը, ով չունի դատվածություն.***
3) նախկինում նոտար աշխատած, դատվածություն չունեցող, և 65 տարին լրանալու կապակցությամբ պաշտոնից ազատված անձը.
4) միջնակարգ դպրոցը գերազանց ավարտած, իրավաբանական ֆակուլտետի երրորդ կուրսում սովորող ուսանողը՝ համատեղության կարգով.

58. Ստորև բերվածներից ի՞նչ գործողություններ է իրականացնում նոտարը՝
1) ***վավերացնում է լիազորագրեր.***
2) ***տալիս է ժառանգության իրավունքի վկայագրեր.***
3) ***հաստատում է քաղաքացու՝ որոշակի վայրում գտնվելու փաստը.***
4) հաստատում է քաղաքացու առողջ լինելու փաստը.

59. Ինչի՞ հիման վրա է ստուգվում ֆիզիկական անձի ինքնությունը՝
1) ***անձի ինքնությունը կարող է ստուգվել անձնագրով.***
2) անձի ինքնությունը կարող է ստուգվել բանկային քարտով՝ եթե այն պարունակում է լուսանկար.
3) ***անձի ինքնությունը կարող է ստուգվել զինվորական գրքույկով.***
4) անձի ինքնությունը կարող է ստուգվել համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքով.

60. Նոտարն իրավունք ունի ընդունել՝
1) ***օրենքին չհակասող ցանկացած փաստաթուղթ.***
2) որոշակի նոտարական գործողություններ կատարելու փոխարեն նվերներ.
3) օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր.

4) անժառանգ գույք՝ որպես ժառանգություն.

61. Նոտարը վավերացնում է՝
1) իրավաբանական անձանց կտակները.
2) ***գործունակ անձանց կտակները.***
3) լիազորագրով գրված կտակները.
4) բանավոր կտակները.

62. Ժառանգության վկայագիր տալու դեպքում նոտարը ստուգում է՝
1) ժառանգատուի սեռը.
2) ***ժառանգատուի մահվան փաստը.***
3) ***ժառանգության բացման ժամանակը.***
4) ***ժառանգության բացման վայրը.***

63. Անձի պահանջով նոտարը պարզում է ՝
1) ***փաստաթուղթը ներկայացրած անձի ինքնությունը.***
2) փաստաթուղթը ներկայացրած անձի նախասիրությունները.
3) ***փաստաթուղթը ստացող անձի ինքնությունը.***
4) փաստաթուղթը ներկայացրած անձի էլեկտրոնային փոստի գաղտնաբառը.

64. Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ՀՀ քաղաքացիության իրավունք ունի այն երեխան՝
1) որի ծնողները ծագումով հայ են.
2) որի ծնողները ծագումով հայ են՝ անկախ քաղաքացիությունից.
3) ***որի ծնողներից մեկը ՀՀ քաղաքացի է.***
4) ***որի ծնողներից միայն մեկը ՀՀ քաղաքացի չէ.***

65. Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները՝
1) բացառում են օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատությունները.
2) ***չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ.***
3) բացառում են միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքները և ազատությունները՝ բացառությամբ եթե վերջիններս սահմանված են ՀՀ կառավարության կողմից վավերացված միջազգային պայմանագրով.
4) սահմանափակվում են սահմանադրությամբ չնախատեսված պարտականություններով.

66. Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է՝

1) ***ժողովրդին.***
2) օրենսդիր, գործադիր և դատական իշխանությանը.
3) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին.
4) պետությանը.

67. Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են՝
1) ՀՀ կառավարության որոշմամբ.
2) ***հանրաքվեի միջոցով.***
3) ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ.
4) բացառապես ՀՀ Նախագահի նախաձեռնությամբ.

68. Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը՝
1) սահմանվում են գերատեսչական նորմատիվ իրավական ակտերով.
2) սահմանվում են բացառապես ՀՀ Սահմանադրությամբ.
3) ***սահմանվում են բացառապես ՀՀ օրենքներով.***
4) չեն սահմանվում օրենքով.

69. Յուրաքանչյուր փաստաթուղթ նոտարի մոտ գրանցվում է՝
1) մեկից երեք անգամ.
2) հինգ օրինակից.
3) ըստ նոտարի հայեցողության.
4) ***միայն մեկ անգամ.***

70. Նոտարի կողմից վավերացված կամ տրված փաստաթղթերի կորստյան դեպքում տրվում է՝
1) կորած փաստաթղթի պատճենը.
2) ***կորած փաստաթղթի կրկնօրինակը.***
3) տեղեկանք կորստի մասին.
4) քաղվածք գրանցամատյանից.

71. Նոտարի կողմից իր գրասենյակից դուրս նոտարական գործողություններ կատարելու դեպքում՝
1) ***կարող է գանձվել լրացուցիչ վճար՝ ոչ ավելի, քան նվազագույն աշխատավարձի 10-ապատիկի չափով.***
2) չի կարող գանձվել լրացուցիչ վճար.
3) կարող է գանձվել լրացուցիչ վճար՝ ոչ ավելի, քան նոտարի աշխատավարձի 10-ապատիկի չափով.
4) կարող է գանձվել լրացուցիչ վճար՝ ոչ պակաս քան նվազագույն աշխատավարձի 10-ապատիկի չափով.

72. Ուսուցման դասընթացն ավարտած նոտարի թեկնածուին իրավաբանական ինստիտուտի կողմից տրվում է՝
1) նոտարի վկայական.
2) ***ուսուցման վկայագիր.***
3) պարգևատրում.
4) իրավաբանական անձի կարգավիճակ.

73. Նոտարի մոտ փաստաթղթերի պահպանության նախապատրաստելու հետ միաժամանակ՝
1) կատարվում է պահպանության ենթակա փաստաթղթերի ոչնչացում.
2) կատարվում է պահպանության ենթակա փաստաթղթերի թվայնացում.
3) ***կատարվում է ոչնչացման ենթակա փաստաթղթերի ընտրություն.***
4) կատարվում է պահպանության ենթակա փաստաթղթերի վավերացում և թարգմանություն.

74. Իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում որպես ավանդ ներդրված հողամասի սեփականության իրավունքը ե՞րբ է անցնում իրավաբանական անձին՝
1) ***հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո.***
2) որպես ավանդ ներդնելու պահից.
3) հողամասը իրավաբանական անձից փոխանցելու պահից.
4) հիմնադիր պայմանագիրը ստորագրելու պահից.

75. Ո՞ր օրենքով է սահմանվում հողամասերի նկատմամբ պետական գրանցման (և գրանցման մերժման) կարգը՝
1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքով.
2) ***հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և դրա մերժման կարգը սահմանվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.***
3) ***«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով.***
4) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով.

76. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վարույթում ընդհանուր իրավասության դատարանը փաստերի հաստատման վերաբերյալ ինչպիսի՞ գործեր է քննում՝
1) ***գործեր, որոնք վերաբերվում են անձանց ազգակցական հարաբերություններին.***
2) ***գործեր, որոնք վերաբերվում են ծննդյան, որդեգրման (դստերագրման), ամուսնության, ապահարզանի և մահվան գրանցմանը.***

3) քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիմքում դրված փաստերի հաստատում.

4) ***գործեր, որոնք վերաբերվում են ժառանգությունն ընդունելուն և ժառանգության բացման վայրին.***

77. Ընդհանուր իրավասության դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝

1) հայցը ակնհայտ անհիմն է.

2) ***վեճը ենթակա չէ դատարանում քննության.***

3) ***նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ.***

4) ***այլ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ.***

78. Ընդհանուր իրավասության դատարանը կիրառում է արագացված դատաքննություն, եթե՝

1) հայցվորը օտարերկրացի է.

2) ***հայցն ակնհայտ հիմնավոր է.***

3) ***հայցն ակնհայտ անհիմն է.***

4) հայցվորը առևտրային կազմակերպություն է.

79. Իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման դեպքում ներկայացվում են՝

1) ***տեղեկանք հարկային և մաքսային մարմինների կողմից պետական բյուջեի հանդեպ պարտավորությունների բացակայության մասին.***

2) պետական գրանցման վկայականը.

3) ***պարտավորությունների բացակայության մասին տեղեկանք ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովից, եթե լուծարվող ընկերությունը մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող իրավաբանական անձ է.***

4) լուծարվող ընկերության կանոնադրության բոլոր օրինակները և պետական գրանցման վկայականը.

80. Նոտարը պետք է իմանա և հետևի՝

1) Շվեդական նոտարիատի միջազգային միության սկզբունքներին և դրույթներին.

2) ***լատինական նոտարիատի միջազգային միության սկզբունքներին և դրույթներին.***

3) Եվրոպական նոտարիատի միջազգային սկզբունքներին և դրույթներին.

4) ԱՊՀ նոտարիատի միջազգային սկզբունքներին և դրույթներին.

81. Նոտարը պարտավոր է՝

1) ***տարին մեկ անգամ, ոչ պակաս քան երեք շաբաթով ձևակերպել իր արձակուրդը.***

2) վարել անբարեխիղճ մրցակցություն.

3) ***օգնել և մասնագիտական փորձը փոխանակել երիտասարդ գործընկերների հետ.***

4) նոտարական գրասենյակ դիմած անձանց գրավել նախօրոք սահմանված գների իջեցումով.

82. Նոտարին կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ որոշում ընդունում է՝

1) ՀՀ կառավարությունը.

2) ***նոտարական պալատը.***

3) հանրային ծառայությունների էթիկայի հանձնաժողովը.

4) ՀՀ արդարադատության խորհուրդը.

83. Դատավարության կողմերն են՝

1) ***հայցվորն ու պատասխանողը.***

2) երրորդ անձինք.

3) պետական շահերի պաշտպանության համար դիմած դատախազը.

4) պետական մարմինները.

84. Գործողության կատարման հայցը դատարան է ներկայացվում՝

1) ***եռամսյա ժամկետում՝ այն պահից, երբ վարչական մարմին դիմում է ներկայացվել պահանջվող գործողությունը կատարելու վերաբերյալ.***

2) վեց ամսյա ժամկետում՝ վարչական մարմնի կողմից այն մերժելու պահից.

3) երկամսյա ժամկետում այն պահից, երբ մերժվել է տվյալ վարչական ակտի ընդունումը.

4) անկախ ժամկետից.

85. Գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից ՝

1) ***ամուսինների, երեխաների և խնամքի տակ գտնվող այլ անձանց իրավունքները, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ, եթե նույնիսկ դրանք առանձին չեն գրանցվել.***

2) ցանկացած գծային և ինժեներատրանսպորտային կառույցների, շինությունների սպասարկման և պահպանման նպատակով մուտքի իրավունքը.

3) ***ՀՀ օրենսդրությամբ ընդհանուր կանոն և արգելք (առողջապահական, պաշտպանական և այլն) սահմանող սահմանափակումները.***

4) էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների օգտին սահմանված գրավի և սերվիտուտի իրավունքները.

86. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարման բարձրագույն մարմնի բացառիկ լիազորություն չէ՝

1) կազմակերպություն հիմնադրելու կամ նրան մասնակցելու հարցը.
2) ***խոշոր գործարքների կնքումը.***
3) ***ընկերության աուդիտորի ընտրությունը.***
4) լուծարման հաշվեկշռի ընդունումը.

87. Վարչական դատարան կարող է բողոքարկվել՝

1) նոտարի անգործությունը, եթե դա կապված է որևէ գործարք կնքելուն պարտավորեցնելուն.
2) նոտարի կողմից նոտարական էթիկայի կանոնները խախտելու դեպքում.
3) ***նոտարի այն գործողությունները, որոնք իրենցից գործարքի վավերացում չեն ներկայացնում.***
4) նոտարական գործողության հետևանքները վերացնելու դեպքում.

88. Գործողության կատարման հայց վարչական դատարանին կարող է ներկայացվել՝

1) անկախ ժամկետից.
2) մեկամսյա ժամկետում այն պահից սկսած, երբ լրացել է վարչական ակտ ընդունելու համար սահմանված առավելագույն ժամկետը.
3) ***մեկամսյա ժամկետում՝ վարչական մարմնի կողմից այն մերժելու պահից.***
4) ***եռամսյա ժամկետում այն պահից սկսած, երբ վարչական մարմնին դիմում է ներկայացվել պահանջվող գործողությունը կատարելու համար.***

89. Որ հարցերով որոշումներն են ընդունվում բաժնետիրական ընկերության հիմնադիր ժողովի մասնակիցների ձայների 3/4-ով՝

1) ***բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքների հաստատումը.***
2) ***ընկերության կանոնադրական կապիտալի չափը.***
3) ընկերության հիմնադրման հարցը.
4) ընկերության խորհրդի ընտրության հարցը.

90. Բաժնետիրական ընկերության գույքի շուկայական արժեքը սահմանում է՝

1) անկախ գնահատողի որոշմամբ.
2) ***խորհուրդն իր որոշմամբ.***
3) ժողովի որոշմամբ.
4) տնօրենների խորհուրդը, եթե ընկերության կանոնադրությամբ նման իրավասություն է վերապահված իրեն.

91. Պետական հաշվառման համար անհատ ձեռնարկատերը գործակալություն է ներկայացնում՝

1) անձնագրի պատճեն.
2) ***դիմում.***
3) լուսանկար.
4) տեղեկանք բնակության վայրից.

92. Նոտարը կարող է հաստատել՝
1) որ անձը մահացած է.
2) որ անձը անհայտ բացակայող է.
3) ***որ անձը ողջ է.***
4) որ անձը ծանր հիվանդ է.

93. Վարձույթի պայմանագրով՝
1) վարձակալության հանձնված գույքի հիմնական վերանորոգման պարտականությունը կրում է Վարձատուն, իսկ ընթացիկ վերանորոգման պարտականությունը վարձակալը.
2) Վարձակալության հանձնված գույքի ընթացիկ վերանորոգման պարտականությունը կարող է դրվել Վարձակալի վրա.
3) ***վարձակալության հանձնված գույքի հիմնական և ընթացիկ վերանորոգման պարտականությունը կրում է Վարձատուն.***
4) կարող է սահմանվել, որ Վարձակալը կրում է հիմնական վերանորոգման պարտականությունը, պայմանով, որ այդ ծախսերը հաշվանցվեն վարձավճարից.

94. Պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնել՝
1) կարող է տեղի ունենալ միայն գործարքով.
2) կարող է տեղի ունենալ միայն օրենքի հիման վրա.
3) չի թույլատրվում.
4) ***կարող է տեղի ունենալ ինչպես գործարքով, այնպես էլ օրենքի հիման վրա.***

95. Պարտավորության մեջ անձանց փոփոխության որ պայմանն է թույլատրելի՝
1) պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու կանոնները կիրառվում են նաև հետադարձ պահանջների նկատմամբ.
2) պարտապանը կարող է իր պարտքը փոխանցել այլ անձի՝ առանց պարտատիրոջ համաձայնության.
3) ***պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու դեպքում պարտապանի համաձայնությունը չի պահանջվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով.***
4) ***պարտապանը կարող է իր պարտքը փոխանցել այլ անձի առանց պարտատիրոջ համաձայնության, եթե օրենքով հատուկ սահմանված է դրա մասին.***

96. Ինչն է պարտադիր սահմանել լիցենզային պայմանագրում՝

1) ***վարձատրության չափի որոշման կարգը.***
2) ***վարձատրության վճարման ժամկետները.***
3) լիցենզառուի պատասխանատվության պայմանները.
4) ***լիցենզային պայմանագրով փրամադրվող իրավունքները և դրանց օգտագործման սահմանները.***

97. Հեղինակի գույքային իրավունքները գործում են՝

1) ***հեղինակի կյանքի ընթացքում և շարունակում են գործել նրա մահից հետո 70 տարի.***
2) հեղինակի կյանքի ընթացքում.
3) հեղինակի կյանքի ընթացքում և շարունակում են գործել նրա մահից հետո 50 տարի.
4) հեղինակի կյանքի ընթացքում և շարունակում են գործել նրա ժառանգների համար անժամկետ.

98. Երբվանից է սկսում գործել հեղինակի գույքային իրավունքների գործողության ժամկետը՝

1) մահվան ամսվան հաջորդող ամսվա մեկից.
2) ***մահվան հաջորդող տարվա հունվարի մեկից.***
3) մահվան փաստը հաստատող դատական ակտը օրինական ուժի մեջ մտնելու պահից կամ դրանում նշված ժամկետում.
4) հեղինակի ժառանգների կողմից ժառանգությունն ընդունելու պահից.

99. Ով է իրավասու սահմանելու հեղինակային վարձատրության նվազագույն դրույքաչափերը՝

1) կողմերը՝ փոխադարձ համաձայնությամբ.
2) ***ՀՀ կառավարությունը.***
3) ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը.
4) ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը.

100. Վավերացման և հաստատման ենթակա չեն, ինչպես նաև նոտարական գործողության կատարման համար հիմք չեն ընդունվում այնպիսի փաստաթղթեր, որոնցում՝

1) առկա են ուղղումներ, որոնք ծանոթագրված են
2) ***նշված չեն ամիս, ամսաթիվ, տարին.***
3) ***առկա են մատիտով գրված մասեր.***
4) առկա փաստաթղթերը համարակալված չեն.